



Բացառիկ. Անհասկանալի ներդրում Մանհայմում

Կարգավիճակ՝ 04.01.2021, ժամը՝ 16:55

ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑՆ ՈՒ ԲԱՔՎԻ ՓՈՂԸ

Մանհեյմում ադրբեջանցի ներդրողները ձեռք են բերել գրասենյակային շենք: Ըստ Հարավ-արևմտյան ռադիոյի (ՀԱՌ, գերմ.՝ Südwestrundfunk, SWR) հետազոտությունների՝ դրա հետևում կանգնած են օֆշորային ֆիրմաներ, որոնք ջրի երես են դուրս գալիս “Panama Papers”-ի ցանցում, և խաղացողներ պետության ղեկավարի շրջապատից:

Կայ Լաուֆեն, ՀԱՌ

Այժմ կրկին Ադրբեջանը բոլորի շուրթերին է, քանի որ Բունդեսթագի՝ վերջերս մահացած պատգամավոր Կարին Շթրենցից բացի՝ մի քանի քաղաքական գործիչներ ևս կասկածի տակ էին կամ են կովկասյան փոքր, բայց ունևոր պետության օգտին առնվազն լոբբիստական աշխատանք իրականացնելու համար, օրինակ՝ Բունդեսթագի Քրիստոնեա-դեմոկրատական միության (ՔԴՄ, գերմ.՝ Christlich-Demokratische Union) պատգամավոր Ակսել Ֆիշերը, որի դեմ դատախազությունը հետաքննություն է վարում՝ կաշառակերության նախնական կասկածի պատճառով:

Դիմակների-հանձնաժողովի-գործից հետո աչքի էր ընկել նաև բոլոր պաշտոններից հրաժարված՝ նախապես Բունդեսթագում Մանհայմի ՔԴՄ պատգամավոր Նիկոլաս Լյոբելը՝ որպես գերմանա-ադրբեջանական հարաբերությունների հավասարիմ պաշտպան: Այդ միջոցին նրա ծննդավայրում անուշադրության է մատնվում նախապես գրասենյակային մի մեծ շենք, որը շուրջ վեց տարի առաջ գնվեց Բաքվի գործարարների կողմից, բայց երբեք չօգտագործվեց: Պատմությունը հարցեր է բարձրացնում Գերմանիայում ադրբեջանցիների իրական հետաքրքրությունների վերաբերյալ:



31.03.2021

Դավաճանության մեղադրանք

Դատախազությունը հետաքննություն է վարում Լյոբելի դեմ

Բունդեսթագի նախապես ՔԴՄ պատգամավորը մեղադրվում է, ի միջի այլոց, դավաճանության մեջ:

Մեծ հույսեր՝ կապված հայտնի շենքի հետ

2015 թ. շենքի մանհայնցի կապալառու Էգոն Շեուերմանը ցանկանում էր մի փոքրիկ սենսացիա հաղորդել իր հայրենի քաղաքին. նա ասում է, որ ինքն է վաճառել “BBC-York” էլեկտրոնային ֆիրմայի՝ նախապես գրասենյակային շենքը, որն արևմուտքից դեպի քաղաք մուտքի մոտ՝ աչքի ընկնող վայրում, նկատվում է Մանհայնի յուրաքանչյուր այցելուի կողմից: Աղբբեջանցի ներդրողները ցանկանում էին այնտեղ ներդնել 30 միլիոն եվրո և թողնել, որ մրցանակի արժանացած իտալական ճարտարապետական գրասենյակը կառուցի քաղաքի առաջին հինգաստղանի հյուրանոցը:

Այսուամենայնիվ, այսօր ով այցելում է Գոթլիբ-Դայմլեր-Շթրասե 6, անմիջապես ճանաչում է. տարիներ ի վեր այստեղ բացարձակապես ոչինչ չի արվել: Կիսով չափ ապամոնտաժված երկնաքերը ծածկվում է մամուռով: Շեուերմանը ՀԱՌ-ին ասաց, որ այլևս երբեք չի լսել գնորդների մասին: Վաճառքի գինը նա չնշեց:



13.03.2021

Մեղադրանքներ «Միության» քաղաքական գործիչների դեմ

Գրկախառնություն բռնակալների հետ

Երկար ժամանակ «Միություն»-ում կա հաջող գործակցություն Աղբբեջանի և Ղազախստանի հետ:

Շինարարներն անհասանելի են

Քաղաքի շինարարության վարչություն մամուլի խոսնակ Քոբիննա Հիսսը նույնպես հաստատում է. քաղաքը ոչ մի կապ չունի սեփականատիրոջ հետ, գրությունները թեև չէին վերադառնում, բայց մնում էին անպատասխան: Նա նշում է, որ շուրջ երեք տարի առաջ, իհարկե, շինարարական վարչությունը ստացել է գրասենյակի շենքը հյուրանոցի վերակառուցելու համար շինարարության թույլտվության երկարացման առաջարկ: Այն տրամադրվեց մինչև այս տարվա սեպտեմբերի 23-ը: Հիսսը ՀԱՌ-ին վստահեցրեց, որ շինարարության թույլտվությունը նույնպես կարող է կրկին երկարաձգվել:

Որ խոսքը նույն սեփականատիրոջ մասին է, որը շենքը գնել էր Էգոն Շեուերմանից, հաստատում է հողային ռեզիստրի ընթացիկ քաղվածքը: Դրանում որպես սեփականատեր է հանդես գալիս "Sapphire Property Development GmbH, Mannheim"-ը: Ֆիրման թեև նշված է Մանհեյմի առևտրային ռեզիստրում, բայց հասցեն նշվում է Քյոլնում: ՀԱՌ-ի ապահովագրությունն անհետանում է այնտեղ՝ վրան շուրջ 20 այլ անուններով փոստարկղի բնիկում: Նամակի հարցերն օրեր շարունակ անպատասխան էին մնում:

Տարակուսելի կապեր

Նախ գրությունը հնարավորինս պետք է իր ճանապարհը գտնի ջրանցքի վրայով, քանի որ 2020 թ. նոյեմբերից ի վեր որպես "Sapphire Property Development GmbH"-ի գործադիր տնօրեն է գրանցված 24-ամյա Իսգանդեր Մամեդգադան, որն ապրում է Լոնդոնի մի բնակարանում, որը ցուցադրված է 4,7 միլիոն ֆունտ շուկայական արժեքով (եվրոյով վերահաշվարկված՝ 5,5 միլիոն):

Այլ կերպ քիչ բան կարելի է իմանալ Մամեդզադայի մասին: Դրա փոխարեն վկայակոչումներ կան նրա երկարամյա նախորդ Մայքլ Շվարցմանի առավել գունեղ կյանքի մասին: Նրա անունը հիշատակվում էր «Հետաքննությունների դաշնային բյուրոյի» (ՀԴԲ, անգլ.՝ Federal Bureau of Investigation, FBI) գաղտնի մի զեկույցում դեռ 1994 թ.: ՀԴԲ-ի "Organizational Intelligence Unit"-ի ներքին զեկույցում ասվում է, որ Ֆլորիդայի գործարարը, որը սերտ կապեր ունի Բաքվի հետ, աշխատում է «բացառապես ռուսական կազմակերպված հանցավորության անդամների համար»:

Մաֆիայի հետ կապերի կասկած

«The Insider» հետազոտող ամսագրի ուսումնասիրությունները ցույց են տալիս Շվարցմանի կապերը մի քանի, այսպես կոչված, «օրենքով գողերի», այսինքն՝ նախկին ԽՍՀՄ-ի մաֆիայի պարագլուխների հետ: Քյոլն նստավայրով «Sapphire Property Development GmbH»-ն էլ է խճճված «ծուռ» գործերում: Մի քանի հետքեր կարծես դա են հուշում:

Ֆիրման սկզբում հիմնադրվել էր Բոննում այլ անվանումով՝ որպես, այսպես կոչված, կորպորացիա, այսինքն՝ դեռևս առանց գործարքային նպատակի, և վերավաճառվեց 2014 թ.: Այդ ժամանակ նոտարական պայմանավորվածությանը ներկայացավ Ադրբեյջանից՝ Բաքվից, ոմն Մագսուդ Ահմադխանով. անուն, որը ծննդյան նույնական ամսաթվով հայտնվում է նաև "Paradise Papers"-ում, այսինքն՝ հարկերից խուսափելու համակարգերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրում: Նա կառավարիչ է նշանակել Մայքլ Շվարցմանին:



04.13.2016

“Panama Papers”

«Դոսյե» - Ո՞վ: Ե՞րբ: Ի՞նչ: Որտե՞ղ: Ինչպե՞ս

“Panama Papers”-ի մերկացումները ցնցել են շատ կառավարությունների:

Ֆիրմաների կասկածելի ցանց

“Sapphire GmbH”-ի բաժնետոմսերը պահվում են լյուքսեմբուրգյան “Liza Investment” ձեռնարկության կողմից: Այն հետագայում վերանվանվում է “Sapphire Finance S.A.”: “Sapphire Finance S.A.”-ն “Sapphire Property Development”-ին վարկ է տալիս և ինքն իր հերթին ավելի մեծ վարկեր վերցնում: Այս փողի հետևում կանգնած է “Bright Global S.A.” անունով մի ֆիրմա՝ կրկին վաճառված:

Իտալիայում “Bright Global”-ը հայտնվում է մի քանի կասկածելի դեպքերում: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների՝ Իտալիայի արդարադատությունը հետաքննություն է վարում դրա դեմ՝ փողերի լվացման պատճառով: Այս դեպքում խոսքը կրկին ու կրկին շքեղ հյուրանոցների և թանկարժեք անշարժ գույքի, կոռուպցիայի և փողերի լվացման մասին է, և մի ժամանակ՝ նաև ծխախոտի մաքսանենգության: Թե ում է պատկանում “Bright Global S.A.”-ն, մինչ օրս պարզ չէ:



Տարիներ ի վեր Մանհեյմի անբարեկենս կիսակառույցի վրա չեն աշխատել:

2016 թ., երբ “Panama Papers”-ի գործը հանկարծակի բացվում է, վարկերը արտագրվում են մասնավոր անձանց: Քանի որ միջազգային ճնշման տակ Լյուքսեմբուրգը արդեն թույլ է տալիս ավելի շատ պատկերացում ստանալ այնտեղ հայտնված ֆիրմայի կառույցների մասին, այժմ կարելի է հստակորեն նշել, որ “Sapphire Finance S.A.”-ն, որը ֆինանսավորել է Մանհեյմի “York” շենքի գնումը, արդեն կիսով չափ պատկանում է Սաբինա Մամեդովային և Ազեր Ասգարովին, որոնք երկուսն էլ ծնունդով Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից են:

Սերտ շփումներ պետության ղեկավար Ալիևի հետ

Ադրբեջանցի Ասգարովը, որը 2011 թ. Լայպցիգում Եվրոպայի առաջնությունում նվաճեց արծաթե մեդալ, Ադրբեջանում հայտնի է որպես ձյուդոյի վետերան: Որպես շենքի կապալառու՝ նա, կարծես, շատ սերտ կապեր է պահում պետության ղեկավար Իլհամ Ալիևի հետ: Ադրբեջանական ընթացիկ մի վավերագրական ֆիլմ հաղորդում է, որ նա իր «Ազիմպորտ» ընկերության հետ, առանց մրցույթի հայտարարման, ըստ երևույթին, ստացել է մի քանի հարյուր պետական շինարարական պայմանագիր:



Ասում են, որ պետության ղեկավար Ալիևը Ասադովի հետ կնքել է մի քանի պետական շինարարական պայմանագիր: Նկար՝ AP

Նշվում է, որ դա հնարավոր է, քանի որ «Ազիմպորտ»-ի հետևում իրականում Ալի Ասադովն է թաքնված: Ավելի քան տասը տարի նա պետության նախագահ Իլհամ Ալիևի տնտեսական խորհրդական էր, որը նրան առաջարկեց վարչապետի պաշտոնում 2019 թ. հոկտեմբերին: Խորհրդարանն առանց դեմ ձայնի գլխով արեց առաջադրմանը:

Վավերագրական ֆիլմում կարելի է տեսնել շինարարության ոլորտի աշխատողների, որոնք գանգատվում են, որ իրենք «Ազիմպորտից» երբեք վարձատրություն չեն ստացել: Նրանք կառուցել էին մարզական օջախները, որոնցում 2015 թ. անցկացվեցին հեղինակավոր «Եվրոպական խաղեր»-ը. ատլետիկայի մրցույթը, որին, ի թիվս այլոց, եկել էին ՔԴՄ հինգ քաղաքական գործիչներ, այդ թվում՝ նախապես գիմնաստիկ Էբերհարդ Գիենգերը, որն այժմ Բունդեսլաթում է՝ հոգուտ Նեկար-Չաբեր ընտրական օկրուգի:



28.06.2015

Եվրոպական խաղեր Բաքվում

Որտե՞ղ էր օլիմպիական ոգին:

Բաքվում ավարտվեցին Եվրոպայի առաջին օլիմպիական խաղերը:

Ի՞նչ է իրականում թաքնված Բաքվի փողի հետևում, որը հոսում էր դեպի Մանհեյմի “York” շենք: Ո՛չ Մայքլ Շվարցմանը, ո՛չ Ազեր Ասգարովը չեն պատասխանել ՀԴԲ-ի հարցումներին: Քաղաքն առայժմ ստիպված կլինի ապրել տգեղ կիսակառույցի հետ:

Աղբյուր՝ <https://www.tagesschau.de/investigativ/swr/aserbajdschan-bauruine-mannheim-101.html>